# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.08.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ՆԳ-2021/240**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.08.2021թ. թիվ 26/26-1/13576-2021 գրությամբ «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 17.08.2021թ. թիվ 01/99-19375 գրության հիման վրա 25.08.2021թ. թիվ 26/26-1/13576-2021 գրությամբ, նախաձեռնել է «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.**

«Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/240 ընթացակարգի շրջանակներում 30.08.2021թ. ժամը 09:18-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.**

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.08.2021թ. թիվ 01/99-19375 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի միջև 16.07.2021թ. կնքվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» ծածկագրով գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Ընկերության տնօրենը 2021 թվականի հուլիսի 30-ի գրությամբ տեղեկացրել է, որ Ընկերությունը չնախատեսված խոչընդոտների պատճառով հրաժարվում է մատակարարել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ապրանքները և խնդրում է լուծարել պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի

համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով Ընկերության դիմումը պայմանագիրը լուծարելու վերաբերյալ և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, «Երևանի քաղաքապետարանի և «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի միջև 16.07.2021թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» ծածկագրով գնման պայմանագիրը համարել լուծված»:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերությունով, առաջարկում եմ «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/240 ընթացակարգի շրջանակներում 30.08.2021թ. ժամը 09:18-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2021/240 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/240 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի քաղաքապետարանի և «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի միջև 16.07.2021թ. կնքվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 20 հատ նստարանների մատակարարման ժամկետ է սահմանվել 2021 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

3. «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ն հրաժարվում է մատակարարել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» պայմանագրով նախատեսված ապրանքները առաջացած չնախատեսված խոչընդոտների պատճառով (ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացված կալանք): Հայցում ենք Ձեր ներողությունը և խնդրում ենք լուծարել պայմանագիրը»:

4. Պատվիրատուն «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ին ուղղված 11.08.2021թ. թիվ 29/01-08880 ծանուցմամբ՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին, հայտնել է հետևյալը.

««Երևանի քաղաքապետարանի և «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի միջև 16.07.2021թ. կնքվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» ծածկագրով գնման պայմանագիր:

Սույն գնման պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Ձեր 2021 թվականի հուլիսի 30-ի գրությամբ տեղեկացրել եք, որ Ընկերությունը չնախատեսված խոչընդոտների պատճառով հրաժարվում է մատակարարել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ապրանքները և խնդրում է լուծարել պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով Ձեր դիմումը պայմանագիրը լուծարելու վերաբերյալ և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, «Երևանի քաղաքապետարանի և «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի միջև 16.07.2021թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» ծածկագրով գնման պայմանագիրը համարվում է լուծված:

Ծանուցումը ներկայացվում է Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջներն իրականացնելու համար»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 11.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցում:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.08.2021թ. թիվ 26/26-1/13576-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 17.08.2021թ. թիվ 01/99-19375 գրությունը՝ կից փաստաթղթերով և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Երևանի քաղաքապետարանի և «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի միջև 16.07.2021թ. կնքվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 20 հատ նստարանների մատակարարման ժամկետ է սահմանվել 2021 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

«Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ն հրաժարվում է մատակարարել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» պայմանագրով նախատեսված ապրանքները առաջացած չնախատեսված խոչընդոտների պատճառով (ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացված կալանք): Հայցում ենք Ձեր ներողությունը և խնդրում ենք լուծարել պայմանագիրը»:

Պատվիրատուն «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ին ուղղված 11.08.2021թ. թիվ 29/01-08880 ծանուցմամբ՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին, հայտնել է հետևյալը.

««Երևանի քաղաքապետարանի և «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի միջև 16.07.2021թ. կնքվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» ծածկագրով գնման պայմանագիր:

Սույն գնման պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Ձեր 2021 թվականի հուլիսի 30-ի գրությամբ տեղեկացրել եք, որ Ընկերությունը չնախատեսված խոչընդոտների պատճառով հրաժարվում է մատակարարել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ապրանքները և խնդրում է լուծարել պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով Ձեր դիմումը պայմանագիրը լուծարելու վերաբերյալ և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, «Երևանի քաղաքապետարանի և «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի միջև 16.07.2021թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» ծածկագրով գնման պայմանագիրը համարվում է լուծված:

Ծանուցումը ներկայացվում է Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջներն իրականացնելու համար»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 11.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցում:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ն խախտել է իր և Երևանի քաղաքապետարանի միջև 16.07.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, այն է՝ Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը չնախատեսված խոչընդոտների պատճառով հրաժարվում է մատակարարել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ապրանքները և խնդրել է լուծարել պայմանագիրը, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.08.2021թ. թիվ 26/26-1/13576-2021 գրությամբ «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**